ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏԱՆԱ (ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Արմինե Ալավերդյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Աստանա (Ղազախստանի Հանրապետություն), 2025 թվականի դեկտեմբերի 3-ից 4-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Ասիական զարգացման բանկ:

4. **Գործուղման նպատակը.**

Գործուղման նպատակն էր մասնակցել «Կենտրոնական և Արևմտյան Ասիայում գենդերային բռնություններին արձագանքելու Ասիական զարգացման բանկի ինտեգրված գործողությունները» տարածաշրջանային աշխատաժողովին:

5. **Քննարկված թեմաները.**

Աշխատաժողովում քննարկվել են հետևյալ հարցերը՝

- Գենդերային բռնության հասցեագրում,
- Սեռական շահագործում, բռնություն և հետապնդում,
- Գենդերային բռնության դեմ պայքարի համակարգերի և մոտեցումների ամրապնդում,

- Գենդերային բռնության ենթարկված անձանց համար աջակցման ծառայություններ,
- Բռնություն գործադրած անձանց հետ իրականցվող աշխատանքներ, միջամտության ծրագրեր,
- Գենդերային բռնությունը թվային տարածքում,
- Գենդերային բռնության պայքարի դեմ ուղղված ծրագրերի և նախաձեռնությունների ֆինանսավորում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովի ընթացում մասնակցել եմ **«Գենդերային բռնության ծրագրեր և աջակցության ծառայություններ»** թեմայով պանելային քննարկմանը, որի ընթացում ներկայացրել եմ ՀՀ-ում գենդերային բռնության դեմ պայքարի ոլորտում Կառավարության կողմից իրականցվող հիմնական ծրագրերն ու մատուցվող աջակցության ծառայությունները: Խոսել եմ հետևյալ թեմաների մասին՝

- ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործող աջակցության կենտրոնի ծառայություններ՝ աջակցության տեսակները, աջակցությունների տրամադրման պայմանները, ժամանակահատվածը, այլ հարակից միջոցառումները,

- Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ՝ նպատակը, ծառայություններից օգտվող անձանց շրջանակը, ծառայությունների տրամադրման պայմանները, ժամանակահատվածը,

- Կանանց տնտեսական հզորացման ծրագրեր՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց տնտեսական հզորացման ծրագրեր, թվային հմտությունների զարգացման ծրագրեր,

- «Safe You» հավելվածը՝ որպես բռնության ենթարկված կանանց կամ հավանական զոհերին առաջնային աջակցության տրամադրման, կանխարգելման և իրազեկման թվային նորարարական լուծում,

- «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ

օրենքի փոփոխություններն ու դրանցից բխող նոր կարգավորումների կարևորությունը,

- Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման համակարգը՝ որպես ՀՀ-ում ԸԲ դեպքերի վերաբերյալ մեկ միասնական, համալիր հաշվետվությունների ձևավորման և հավաքագրման թվային լուծում,

- ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարությունը՝ գերակա ուղղությունները, ակնկալվող արդյունքը և նախատեսվող միջոցառումները,

- ԱՄԿ 190 կոնվենցիայի վավերացումը՝ որպես աշխատավայրում կանանց նկատմամբ բռնության և ոտնձգության կանխարգելման առանցքային բաղադրիչ,

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ասիական զարգացման բանկը մեկնարկում է նոր տարածաշրջանային ծրագիր, որի նպատակը կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանն ուղղված քաղաքականություններին և ծրագրերին աջակցելն է: Այս համատեքստում մեկնարկող համագործակցությունը պետք է ուղղված լինի գործող ընտանեկան բռնության ենթարկված անձանց մատուցվող ծառայությունների բարելվմանը և ընդլայնմանը, նոր ծառայությունների փորձարկմանն ու ներդրմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

08.12.2025թ